ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-765-20.10.2020-ՖՎ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 108-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 23-րդ և 24-րդ կետեր.

«23) բանկերում և վարկային կազմակերպություններում հաշվառված՝ ռազմական դրության ժամանակահատվածում իրականացվող ռազմական գործողությունների հետևանքով զոհված, հաշմանդամ դարձած կամ անհայտ կորած ֆիզիկական անձի, նրա ամուսնու, համատեղությամբ ապրող զավակի կամ համատեղությամբ ապրող ծնողի նկատմամբ ձևավորված ու Կառավարության լիազորած մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ հաստատած կարգի համաձայն անհուսալի ճանաչված՝ հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցված ակտիվները (ներառյալ՝ վարկի և այլ գումարները, մինչև դրանց անհուսալի ճանաչվելը և անհուսալի ճանաչվելուց հետո հաշվարկված տոկոսները, տույժերը և (կամ) տուգանքները)՝ դրանք ներելու դեպքում՝ անկախ սույն մասի 18-րդ կետի դրույթներից.

24) ռազմական դրության ժամանակահատվածում իրականացվող ռազմական գործողությունների հետևանքով զոհված, հաշմանդամ դարձած կամ անհայտ կորած անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին, նրա՝ անհատ ձեռնարկատեր կամ նոտար համարվող ամուսնուն, համատեղությամբ ապրող զավակին կամ համատեղությամբ ապրող ծնողին ռեզիդենտ կազմակերպություն համարվող բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից ներվող պարտավորությունները (ներառյալ վարկի և այլ գումարները, դրանց գծով հաշվարկված տոկոսների, տույժերի և (կամ) տուգանքների գումարները):»:

Հոդված 2. Օրենսգրքի 124-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս.

«4. Անկախ սույն հոդվածի 3-րդ մասի դրույթներից՝ ռեզիդենտ կազմակերպություն համարվող բանկերի և վարկային կազմակերպությունների հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են այդ բանկերում և վարկային կազմակերպություններում հաշվառված՝ ռազմական դրության ժամանակահատվածում իրականացվող ռազմական գործողությունների հետևանքով զոհված, հաշմանդամ դարձած կամ անհայտ կորած ֆիզիկական անձի, նրա ամուսնու, համատեղությամբ ապրող զավակի կամ համատեղությամբ ապրող ծնողի նկատմամբ ձևավորված ու Կառավարության լիազորած մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ հաստատած կարգի համաձայն դեռևս անհուսալի չճանաչված ակտիվները (ներառյալ՝ վարկի գումարը,

տոկոսները, տույժերը և (կամ) տուգանքները)՝ դրանք ներելու և այդ մասով ակտիվների հնարավոր կորուստների պահուստին մինչև այդ մասհանումներ կատարած լինելու դեպքում՝ պահուստին ուղղված գումարների չափով համախառն եկամտում վերականգնելու դեպքում:»:

Հոդված 3. Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 40-րդ կետ.

«40) ռազմական դրության ժամանակահատվածում իրականացվող ռազմական գործողությունների հետևանքով զոհված, հաշմանդամ դարձած կամ անհայտ կորած ֆիզիկական անձին, նրա ամուսնուն, համատեղությամբ ապրող զավակին կամ համատեղությամբ ապրող ծնողին ռեզիդենտ կազմակերպություն համարվող բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից տրված վարկի գումարների ներման արդյունքում ֆիզիկական անձի եկամուտները՝ անկախ սույն մասի 19-րդ կետի դրույթներից:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո սույն օրենքով սահմանված անձանց ներված՝ մինչև ռազմական դրության ավարտը ստացված վարկի կամ այլ գումարների, դրանց գծով հաշվարկված տոկոսների, տույժերի և (կամ) տուգանքների նկատմամբ:

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 108-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 23-րդ և 24-րդ կետեր.

«23) բանկերում և վարկային կազմակերպություններում հաշվառված՝ ռազմական դրության ժամանակահատվածում իրականացվող ռազմական գործողությունների ~~հետևանքով~~հետևանքով զոհված~~ կամ~~, հաշմանդամ դարձած կամ անհայտ կորած ֆիզիկական անձի, նրա ամուսնու, համատեղությամբ ապրող զավակի կամ համատեղությամբ ապրող ծնողի նկատմամբ ձևավորված ու Կառավարության լիազորած մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ հաստատած կարգի համաձայն անհուսալի ճանաչված՝ հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցված ակտիվները (ներառյալ՝ վարկի և այլ գումարները, մինչև դրանց անհուսալի ճանաչվելը և անհուսալի ճանաչվելուց հետո հաշվարկված տոկոսները, տույժերը և (կամ) տուգանքները)՝ դրանք ներելու դեպքում՝ անկախ սույն մասի 18-րդ կետի դրույթներից.

24) ռազմական դրության ժամանակահատվածում իրականացվող ռազմական գործողությունների հետևանքով զոհված~~ կամ~~, հաշմանդամ դարձած կամ անհայտ կորած անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին, նրա՝ անհատ ձեռնարկատեր կամ նոտար համարվող ամուսնուն, համատեղությամբ ապրող զավակին կամ համատեղությամբ ապրող ծնողին ռեզիդենտ կազմակերպություն համարվող բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից ~~տրված~~ներվող պարտավորությունները (ներառյալ վարկի ~~գումարներին~~և այլ գումարները, դրանց գծով հաշվարկված տոկոսների, տույժերի և (կամ) տուգանքների ~~ներվող~~ գումարները~~։»։~~)։»։

Հոդված 2. Օրենսգրքի 124-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս.

«4. Անկախ սույն հոդվածի 3-րդ մասի դրույթներից՝ ռեզիդենտ կազմակերպություն համարվող բանկերի և վարկային կազմակերպությունների հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են այդ բանկերում և վարկային կազմակերպություններում հաշվառված՝ ռազմական դրության ժամանակահատվածում իրականացվող ռազմական գործողությունների հետևանքով զոհված~~ կամ~~, հաշմանդամ դարձած կամ անհայտ կորած ֆիզիկական անձի, նրա ամուսնու, համատեղությամբ ապրող զավակի կամ համատեղությամբ ապրող ծնողի նկատմամբ ձևավորված ու Կառավարության լիազորած մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ հաստատած կարգի համաձայն դեռևս անհուսալի չճանաչված ակտիվները (ներառյալ՝ վարկի գումարը, տոկոսները, տույժերը և (կամ) տուգանքները)՝ դրանք ներելու և այդ մասով ակտիվների հնարավոր կորուստների պահուստին մինչև այդ մասհանումներ կատարած

լինելու դեպքում՝ պահուստին ուղղված գումարների չափով համախառն եկամտում վերականգնելու դեպքում:»:

Հոդված 3. Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 40-րդ կետ.

«40) ռազմական դրության ժամանակահատվածում իրականացվող ռազմական գործողությունների հետևանքով զոհված~~ կամ~~, հաշմանդամ դարձած ~~ֆիզիկական~~կամ անհայտ կորած ֆիզիկական անձին, նրա ամուսնուն, համատեղությամբ ապրող զավակին կամ ~~համատեղությամբ~~համատեղությամբ ապրող ծնողին ռեզիդենտ կազմակերպություն համարվող բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից տրված վարկի գումարների ներման ~~արդյունքում~~արդյունքում ֆիզիկական անձի եկամուտները՝ անկախ սույն մասի 19-րդ կետի դրույթներից:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո սույն օրենքով ~~սահմանված~~սահմանված անձանց ներված՝ մինչև ռազմական դրության ավարտը ստացված վարկ~~եր~~ի կամ այլ գումարների, դրանց գծով հաշվարկված տոկոսների, տույժերի և (կամ) տուգանքների նկատմամբ~~:~~

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» (Կ-765-20.10.2020-ՖՎ-011/1) ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ առաջինից երկրորդ ընթերցմամբ քննարկման միջև ընկած ժամանակահատվածում ներկայացված առաջարկների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր, Արկադի Խաչատրյան	Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներ	Առաջարկվում է նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներում հստակեցնել, որ դրանցով առաջարկվող կարգավորումները կիրառելի են նաև վարկի մայր գումարների նկատմամբ:	Ընդունվել է: Նախագծի նշյալ հոդվածներում կատարվել են առաջարկվող հստակեցումները:	Ընդունվել է:
2.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյան	Նախագծի տեքստ	Առաջարկվում է նախագծով առաջարկվող կարգավորումները կիրառելի դարձնել նաև այն դեպքերի նկատմամբ, երբ վարկառուն համարվում է իրավաբանական անձ, որի հիմնադիրը կամ	Չի ընդունվել: 1. Ներկայացված առաջարկությունը չի բխում օրենքի ընդհանուր տրամաբանությունից: 2. Մյուս կողմից, հատկանշականէ այն, որ	Չի ընդունվել:

			վերջինիս փոխկապակցված անձը համարվում է ռազմա-կան դրության ժամանակահատվածում իրականացվող ռազ-մական գործողու-թյունների հետևանքով զոհված կամ հաշման-դամ դարձած անձ:	իրավաբանական անձի տնօրենի կամ հիմնադրի զոհված լինելը կամ հաշմանդամ դառնալը իրավական առումով ամենևին չի խոչընդոտում այդ իրավաբանական անձի ձեռնարկատիրական գործունեությանը: Նշյալ հանգամանքը չի կարելի, սակայն պնդել անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անհատ ձեռնարկատիրոջ մահը կամ հաշմանդամ դառնալը մի դեպքում ուղղակի դադարեցնում է ձեռնարկատիրական գործունեությունը, մյուս դեպքում ուղղակի խոչընդոտ է դրա համար: Պետք է նկատել նաև, որ չնայած այն	

				հանգամանքին, որ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու առումով իրավաբանական անձի և անհատ ձեռնարկատիրոջ իրավունքների միջև բովանդակային տարբերություն չկա, այդուհանդերձ այլ առումներով այս երկու խումբ սուբյեկտների միջև առկա է բովանդակային տարբերություն: Մասնավորապես, ի տարբերություն իրավաբանական անձի, անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձը իր պարտավորություններ ի համար պատասխանատվություն է կրում նաև իր սեփական գույքով: Մինչդեռ, իրավաբանական անձանց դեպքում	

				իրավաբանական անձի բաժնետերերը (մասնակիցները) իրեց սեփական գույքով իրավաբանական անձի պարտավորություններ ի համար պատասխանատվություն չեն կրում, ինչը նշանակում է, որ նույնիսկ այն դեպքերում, երբ իրավաբանական անձի միակ հիմնադիրը համարվի ռազմական գործողությունների ընթացքում զոհված կամ հաշմանդամ դարձած անձ, միևնույն է, այդ հիմնադիրը իր գույքով իրավաբանական անձի պարտավորություններ ի համար պարտավորություն չի կրելու:	
3.	<<	Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է	Ընդունվել է:	Ընդունվել է:

	կառավարություն		նախագծի 2-րդ հոդվածով ՀՀ հարկային օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 24-րդ մասի և նախագծի 4-րդ հոդվածի խմբագրություններ վերանայել այնպես, որ դրանցով նախատեսված կարգավորումները կիրառելի լինեն ոչ միայն վարկային պարտավորությունների նկատմամբ, այլ առհասարակ բոլոր պարտավորությունների նկատմամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կարող են լինել դեպքեր երբ ֆիզիկական անձանց ներվեն նաև լիզինգի կամ ֆակտորինգի հետ կապված պարտավորություններ:	Նշյալ դրույթներում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի տեքստ	Առաջարկվում է նախագծով առաջարկվող կարգավորումները կիրառելի դարձնել նաև	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան	Ընդունվել է:

			ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած անձանց և նրանց փոխկապակցված անձանց պարտավորությունների նկատմամբ:	լրացումներ:	